



Բաժնեգին տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 10 Ֆր. Պալքանեան երկիրներ 50 Սէնթ, արտասահման 60 Սէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

ԹԻԻ 2

2. ՏԱՐԻ

ՓԵՏՐՈՒԱՐ 1930

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՒՒՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Բայց քեզի դէմ բան մը ունիմ, որ քու առաջուան սէրդ ձգեցիր:
Յայտ. Բ. 4

Զարմանալի ժամանակի մը մէջ կ'ապրինք: Ամէն ինչ եւ ամէն ոք անապարանքի մէջ է, քաղաքակրթութիւնն ու գիտութիւնը հեւ ի հեւ կը սլանան յաղթանակէ յաղթանակ, եւ կը քաշեն իրենց հետ քայլ առ հեշտ ստիպման տակ գտնուող մարդկութիւնը:

Աշխարհի առանց անապարելու չկրնար կենալ: Բաղադրեալ կեանքը հետզհետէ աւելի կը բաղադրուի եւ մարդ անհանգիստ կ'ըլլայ դադարէն, կը զգուի գիշերային լուծեմէն, որ իր մտքի ու ջիղերու պրկեալ ոյժերը հանդարտեցնելու միայն պիտի ծառայէր, կը փնտռէ դեռ զբաղում մը այդ լուծեման պահերուն իսկ, վստօղի վարժուած է, չկրնար ուրիշ կերպ խոր. հիւ եւ գործել: Կեանքի զբաղմունքը, օրական հացի ճնշիչ հոգը, ընկերական կեանքի այլ եւ այլ պարագաները, բազմաթիւ թերթերու օրական երեք անգամ բերած քաղաքական, ընկերական, վստառականական ոճիրներու նոր լուրերուն հետեւելու ստիպողականութիւնը, բարեկամական, պաշտօնական այցելութիւններ, ցերեկոյթներ, երեկոյթներ, հանդէս եւ թատրոն, հասոյքի վայրեր կը ջլատեն, կը մաշեցնեն հոգեկան ոյժեր, եւ կը կողոպտեն մարդկային թանկագին ժամանակը. մարդիկ շատ ժամանակ ունին եւ ընտել ժամանակ չունին: Իրենք ալ այս վիճակին վրայ կը զար.

մանան, բայց կարծես քրօնիկ հիւանդութեան մը բռնուածի պէս ստիպուած են կրել, հնազանդիլ: Ազատութեան համար ստեղծուած մարդիկ այսպէս պարզաներու գերի դարձած են, վրայ տալով թանկարժէք, ահաւոր կորուստներ:

Մեզի հաւատացեալներուս ալ յաճախ կը դպչի այդ հիւսիսային սառնամանիքը: Աստուծոյ զաւակ մը ըլլալու գիտակցութեան գալէ, անտեսանելի աշխարհի զօրութիւններուն ծանօթանալէ, անոնց անհուն աւելի արժէքաւորութիւնը գիտնալէ յետոյ՝ երբ քրիստոնեան աշխարհի հոսանքին մէջ դիրք բռնած պահուն, յաճախ կ'ազդուի անկէ, ու պէտքն ունի ամէն օր քրիստոսի մաքրող, ամէն մեղքէ սրբող արեան, պէտք ունի լռին ժամանակներու, խորհրդածութեան, ներհայեցումի, վերանորոգման, եթէ ոչ անզգալաբար նուիրական ինչքեր ձեռքէն հանելու վտանգին մէջ կիցնայ, որուն կը հետեւի նաեւ դժբաղդաբար ամբողջ կեանքն իսկ:

Այսպիսի նուիրական, անհաշուելի կորուստ մը կը մատնանշէ մեր Տէրը եփեսոսի եկեղեցիին: Անիկա իր առաջին սէրը ձգած էր:

Եփեսոսի եկեղեցին կրնար այսօրուան Եւրոպայի ու Ամերիկայի տասը հազարաւոր եկեղեցիներուն օրի.

նակ սեպուհիլ, որովհետեւ Ասիայի եկեղեցիներուն մէջ արդէն կեդրոնական եւ ցցուն դիրք մը զբաղեցնէր: Եփեսացիք լաւ հասկցած էին աշխարհը աւետարանեւ լու Տէրոջը գործին կարեւորութիւնը ու շատ ալ ջանք ու եռանդ ցոյց կուտային: Միեւնոյն ատեն համբերութեամբ կը տանէին իրենց հանդէս տեղի ունեցած արհամարհական ցոյցերը, նեղութիւններն ու հալածանքները: Անոնք *հաեւ* չէին կրնար հանդուրժել չարերուն գոյութեանը իրենց մէջ, անօրէնութեան մէջ դեռ տնտնացողներուն: ձմարտութիւնը հասկնալէ յետոյ հաւատքի հնազանդութեան չդիմողներուն հանդէս ալ իրենք որոշ դիրք կը բռնէին: Գիտէին զանազանել մաքուրն ու անմաքուրը:

Անոնք քրիստոնէական տիպար դաստիարակութիւն ընդունած էին եւ ունէին որոշ վարդապետութիւն, կրնային քննել նոյնիսկ առաքեալի անունով եկող հոգիները, կը զանազանէին ձմարտախօսն ու ստախօսը, հոգեւորն ու մարմնաւորը: Իրենք խօսքով շլացող մարդիկ չէին, հապա առաքեալ կը կոչէին միայն զանոնք, որոնք առաքելական հեղինակութիւնով Աստուծոյ զրկուած էին սոյն պաշտօնը կատարելու: Տէրը եփեսոսի եկեղեցւոյ այս բարձր առաքիւնութիւնները կը ճանչնար, այսու ամենայնիւ դեռ անոր դէմ բան մը ունէր: Եփեսոսի եկեղեցին իր առաջուան սէրը ձգած էր: Այս սիրոյն պակասը մեր Տէրոջը համար անպատուութիւն ու անիրաւութիւն էր, միեւնոյն ժամանակ եկեղեցին առանց անոր պըտղաբեր կեանքէ կը զրկուէր եւ անշնչացած կ'ըլլար:

Ասկէ քանի մը ամիսներ առաջ գերմաներէն տետրակ մը ինկաւ ձեռքս, որ ինձ շատ խորհիլ տուաւ այս մասին եւ զգացի թէ սոյն տետրակը դեռ ըսելիք ունէր շատ մը ուրիշ Հայ հաւատացեալներու, ուստի անկէ կարգ մը մէջբերումներ պիտի ընեմ:—

«Առաջին սէրը խօսեցեալի սէրն է» — երկու հոգիներու միջեւ եղած անտեսանելի, սակայն ամենարական կապը, անծէ-անծ: «Երեսասարդութիւն մը, ջինջ սրտով կոյս մը, կը սիրէ այն անձը, որուն մէջ իր բոլոր կարօտն ու ապագայի յոյսերը կը հանգչին»: Այս սէրէն կը բխի իր կեանքը, իր ծառայութիւնն ու գործունէութիւնը: Ամուսնական կեանքը իր բարդ պարտականութիւններով, իր ուրախութիւնովն ու տրտմութիւնովը այս սիրոյն վրայ հիմնուած է:

ձմարիտ սէրը — առաջին սէրը — կապուած է անձին հետ ո՛չ թէ ինչքին: Անձմարիտ սէրը բնաւ չկրնար երկար շարունակել եւ շուտով փուլաւորվի կ'ենթարկուի, եւ աւերակներու տակ կը թաղուի:

Ի՞նչ պաղ ու անտանելի է այն կեանքը, որ առաջին սիրով սկսուած եւ սակայն ժամանակի ընթացքին մէջ առանց անոր կը շարունակուի:— Կը ճանչնա՞ր ընտանիք մը, որուն մէջ այր ու կնոջ փոխադարձ յարաբերութիւնը միայն պարտականութեան գետնին վրայ հիմնուած է, չխղճացի՞ք այդ ընտանիքին վրայ:

Իրաւ տեսաք որ հոն ամէն ինչ արտաքինապէս տիպար կանոնաւորութեամբ յառնջ կ'երթայ, յարգանք ու խղճամիտ փափկանկատութիւն անպակաս են, ընտանեկան ամէն տեսակ հանգստաւէտութիւն, ամէն խնամք իր ճշտապահութեամբ, ամէն բան տիպար ու երջանիկ ընտանիքի մը բոլոր յատկութիւնները ցոյց կուտայ, այսու հոն պակաս է տանը հոգին, նուիրակաւորութիւնը, դրախտի անուշահոտութիւնը, — առաջուան սէրը: «Որքա՞ն միմեկ զգալու է այր մը երբ ունի կին մը, որ միայն իր պարտականութիւնները կը ճանչնայ, որ թէեւ գիտէ իր տանը խղճամորէն նախիկ, այսու հանդերձ չկրնար լեցնել իր ամուսնոյն սրտի պարտականութիւնը — առաջուան սէրը պակասած է:

Այս է ահա պատճառը, որ մարդիկ ումենք պալատներու մէջ ինքզինքնին ամայի անապատը կ'զգան, իսկ ուրիշներ խրճիթներու մէջ չոր կտոր մը հացով սալախներու կեանք կ'անցնեն:

Մեր Տէրը հոս չը մատնանշեր եկեղեցիին անհաւատարմութիւնը: Ո՛չ անոր վրայ աշխարհային արատ մը գտած է, ո՛չ ալ առանին պարտականութեանց թերացում մը անոր երեսին կը զարնէ, հապա առաջուան ցոյց տրուած սիրոյ աստիճանին անկումը:

Երբ մենք ալ մեր շրջանակներուն, մեր եկեղեցիներուն վիճակը լրջօրէն քննելու ըլլանք, պիտի յանգինք թերեւս ասոր նման եզրակացութեան մը:— Մեր եկեղեցիներուն մէջ ամէն բան իր կարգին է, բարոգաժողովներ, աղօթաժողովներ, յարաբերական ժողովներ, Ս. գրական ուսումնասիրութիւններ, վարդապետական խմբիկ մասին չափազանց մանրակրկիտ պրբատումներ եւ քննութիւններ, Ե. Բ. ընկերութիւններ, ջանիք ընկերութիւններ, կիրաւորեալ դասեր, ժողովներու յաճախողներու խառնեւրամ բազմութիւններ, եկեղեցւոյ ամենալաւ կարգ ու կանոն, ընտանեկան ընկերական ջերմ յարաբերութիւններ, քրիստոսի անուանով սիրազեղ եղբայրութիւն եւայլն, բայց կը նկատենք որ նոյնիսկ աղօթաժողովներուն Յիսուս ինքզինքը առանձին կ'զգայ: «Ատեն մը աղօթքները սրտէն կը բլխէին, այժմ կ'աղօթուի առ ի պարտականութիւն»: Կրօնական պաշտամունքները կը կատարուին գործին սիրոյն համար, ո՛չ թէ պաշտամունքի առարկայ եղող անձին *«զղաղի»*: Այդպիսի եկեղեցական կեանքը լոկ պաշտօնականութեան փոխուած է, վասնզի կը պակսի անոր մէջ այդ կեանքը ստեղծող ու արդիւնաբերող գործութիւնը — առաջին սէրը:

Օ՛հ, եկեղեցիներ, եկեղեցիներու հրեշտակներ, կ'արժէ որ մենք մեզի հետ մանրակրկիտ քննութեան մտնենք: Տէրոջը կողմէ քսան դարեր առաջ եփեսոսի եկեղեցւոյ հնչեցուցած ահազանգը ազդարարութիւն մը թող ըլլայ մեզի:

Եթէ աշխարհի վրայ գտնուած բոլոր եկեղեցիները մէկ մտքով այս համարին առջեւ կենային Ս. Հոգիէն

քննուելու, յանդիմանուելու համոզուելու համար, այն ատեն երկնային ի՛նչ օրհնութեան ծորակներ պիտի բացուէին մարդկային տոչորող սրտերը թրչելու, գո. վացնելու ու պաղարերելու:

Թոյլ տուր ինձ սիրելի ընթերցող, որ աստիճանի, որ զբաղման տէր սո՛ւրբ ըլլաս, քեզի անձնապէս ուղ. ղելու հետեւեալ խօսքերը: Չէ՞ որ իրարու համար կ'ա. դօժենք, իրարու վրայ կը խորհինք եւ իրարու համար միեւնոյն խորհուրդն ունինք որպէսզի քրիստոս մեր մէջ ձեւակերպուի:

Եթէ եփեսոսի եկեղեցին առաջուն սէրը ձգեց (կորսնցոյց), եթէ ամէն եկեղեցիի համար նորէն վտանգը գոյութիւն ունի, այդ վտանգը շատ մօտ է նաեւ ամիսա անձնաւորութեան: Արդ. եօք այդ նուիրական գանձը դեռ կը պահեն: Թերեւս պիտի ըսես թէ ամէն աղօթածողովի առանց կարգ լիակցնելու կ'աղ. Թեւ, վկայութիւններդ ու երբեմն ալ յորդորներդ անպակաս ընեն, Աստուծոյ Թագաւորութեան գործին մէջ միշտ հետա. քրքրութիւն ցոյց կուտաս, դրամ, ժամանակ եւ շատ ոյժ կը վատնես անոր համար, սակայն դու անձամբ քեզմէ դժգոհ ես, վաճառի կզգաս թէ քու մէջդ ընտելող կեանքիդ իշխանը առանձին եւ արտուի է: Ինչո՞ւ արդեօք, մե՞ղք կայ մէջսդ, եթէ ոչ առաջուն սէրդ պակասած է, այն սրտէ ի սիրտ, անձէ անձի հոտող սէրը: Մարդկային սիրոյ կարօտը քաշող Փրկիչդ եփեսոսի մէջ վնասեց այդ առաջուն սէրը ու չգտաւ, քու մէջդ պիտի գտնէ: Ձայս գիտնանք որ եթէ մեր մէջ այդ սէրը պակաս, պիտի պակսի նաեւ ապագայ կեանքի երաշխաւորու. Թիւր, վաճառի կը տեսնենք թէ Տէրը եփեսոսի եկեղեցիին կ'ը. սէ, . . . շուտով կուգամ քեզի ու քու աշտանակդ պիտի շար. ժնմ (իբր քու դատաւորդ): Եփեսոսի եկեղեցիին դիքք բոլոր եկեղեցիներուն մէջ պիտի փոխուէր, առաջինը վերջին պիտի ըլլար: Տէրը ալ չպիտի կրնար ընտելիլ հոն, նախապէս հոգեւո. րութեան կեդրոն եղող այդ ոտանին մէջ: Այսօր, եփեսոսի եկեղեցին գոյութենէ դադարած է այլեւս: Ս. Հոգին արտմեցաւ, բաժնուեցաւ անկէ, քաղաքն ալ դարբնու ընթացքին հիմնադ. տակ, ամայի, ընտելարան եղաւ բուերու ու չափաներու: Ի՛նչ անարկու դատաւոր: Մեր Տէրը մօշտ կրակ է . . . :

Բայց ինչպէս Մարիամ կորուսած Քրիստոսը գտաւ, կոր. տուած այդ նուիրական սէրն ալ կրնայ վերստին գտնուիլ: Տէրը կ'ըսէ. «Միտքդ բեր հիմա ուրիշ որ ինկար, ու ապաշխարէ եւ քու առաջուն գործերդ բլրէ» (համար 5): Ան որ ինքնախարեւ. Թեւոր իր խիղճը բժ. քրեցներ ու ճշմարիտ սրտով մը կ'աճեցնուրէ Աստուծոյ ձայնին, միայր կը բերէ եւ կ'ապաշխարէ իր ընթաց. քնն վրայ, ամիսկա միշտ բաց դուռ մը պիտի գտնէ Քրիստոսի քով, սիրող սիրտ մը եւ մարդկային սէրը վերանորոգող Փրկիչ մը, վաճառի Ան որ զինքն առաջին սիրոյն առաջնորդեց, սոյն սիրոյն մէջ կրնայ հաստատուիլ ալ:

Շնորհք, շնորհք, ամէն բանի բուսական շնորհք:

Արդ, նետուէ այդ շնորհքին մէջ, երգելով.

Ես բարկութեամբ արժան որդի,

Տէր Յիսուսէն շնորհք գտայ,

Ինք բաժանող պատը քակեց

Եւ ես Տէրոջս հետ միացայ.

Ո՞վ կատարեց այս գեժութիւն,

Ողորմութիւն, ողորմութիւն:

Փա՛ռք քեզ, Տէր այս անպատում շնորհքին համար, վաճա. ղի աշխարհի թոհուրոցին մէջ իմ կորսնցոյցած Թանկագին գանձս վերաբանելու եւ Քեզի հետ կատարելապէս մէկ ըլլալու համար ալ բաւական է ան:

ԱՌԱՏ ՆԵՐՈՒՄ

«Անիկա առատապէս կը ներէ»

(Եսայ. 55. 7):

Անոր ներողութեան առատ ըլլալը կը տեսնենք, եթէ նկատի առնենք ներուելիք մեղքերու առատու. թիւնը: Ի՛նչ նիւթ է որ ունիմ առջեւս. հաւաասիկ գետ մը որուն խորութիւնը անյատակ է, գետ մը որուն լայնքէն կարելի չէ անցնիլ, գետ մը լողալու: Գետ չէ ովկիանոս մ'է ան: Ի՛նչ կարելի չէ ըսել մեղքի այս ծովին վրայօք: Անոր մէջ կը լողան ան. թիւ անասուններ պզտիկ եւ մեծ սողուններ: Անոր մէջ է վիշապը որ իր ետեւէն յորձանք կը հանէ, հոն են կատաղի փոթորիկներ եւ սարսափելի մրրիկ. ներ. անոնք շատ դիւրաւ կրնան ընկղսել իրենց վրայէն անցնիլ փորձող նաւակը: Մեղքի վրայ երբ կը խորհիմ, այս խորհուրդը գիտ կը ջախջախէ: Ոհ, մեղք, քու պտղաբեր որովայնէն ի՛նչ բիւրաւոր չա. րիքներ կը ծնին: Ի՛նչ անհամար են մեղքին պտուղ չարեաց բանակները:

Խորհուրդով մեղքեր.— Ապստամբութեան խորհուրդներ, հպարտ խորհուրդներ, հայհոյութեան խորհուրդներ, անաստուածութեան խորհուրդներ, ցանկութեան խորհուրդներ, հեշտասէր խորհուրդ. ներ, անհամբեր խորհուրդներ, չար խորհուրդներ, խարդախ խորհուրդներ, չար յիշողութեան խոր. հուրդներ, անսուրբ ապագայի երազներ. Ի՛նչ երամ. ներ կը վխտան: Ասոր հետ միասին մեր սուրբ խոր. հուրդներ չունենալն ու մէկդի ձգելը ինքնին մեղք է. ապաշխարութեան, երախտագիտութեան, յարգան. քի, հաւատքի եւ նման խորհուրդներու բացակա. յութիւնը հաւասարապէս բազմաթիւ են: Կը տես. նէք թէ մեր ցուցակը կրկնապատիկ է, ներսէն եւ դուրսէն գրուած: Ինչպէս մօղուկներ երեկոյեան օդին մէջ լեցուն են՝ այնքան բազմաթիւ են մտքին անօրէնութիւնները:


Խօսքով մեղքեր.— Կրնայինք քիչ մ'առաջ. ուան ցուցակը կրկնել: Ի՛նչ բառեր խօսած ենք, որոնք Աստուծոյ անարատ եւ սուրբ ականջը նեղա. ցուցած չեն: Իրեն դէմ խօսքեր, Իր Որդւոյն դէմ խօսքեր, խօսքեր Իր օրէնքին եւ Իր Աւետարանին դէմ, մեր դրացիներուն դէմ, ամէն բանի դէմ որ բա. րի եւ ճշմարիտ է: Հպարտ եւ անապարծ խօսքեր, կոռուարար եւ յամառ խօսքեր, անճիշդ խօսքեր, հեշ. տասէր խօսքեր, ունայնութեան եւ կամակոր ան. հաւատութեան խօսքեր: Աստուա՛ծ իմ, որքա՛ն շատ են մեր մեղսալից խօսքերը: Մեր լեզուին մե

քերը — ո՞վ է այն մարդը որ կարենայ զանոնք հաշուել:

Գործքով մեղքեր.— որ իրականին մէջ մեր խորհուրդով մեղքերուն պտուղներն են: Արդեօք մէկը կրնայ իր մանկութեան օրերէն գործած առաջին մեղքէն՝ մինչեւ մազերը ճերմկիւր կամ մինչեւ իր այս տարիքը գործած մեղքերուն հաշիւը հանել: «Ո՞վ կրնայ միտք առնել իր յանցանքները, ծածուկ մեղքերէն զիս մաքրէ»: Թերեւս մեր չգիտնալով գործած մեղքերը՝ մեր գիտակցաբար գործած մեղքերէն աւելի՛ շատ են:

Կրնայ պատահիլ որ մէկուն խիղճը պատշաճօրէն լուսաւորուած չլլայ՝ եւ ուստի իր գործած շատ մը մեղքերը (որոնք իրականին մէջ մեղք են) իրեն իբր մեղք չերեւիր, բայց Աստուծոյ խորաթափանց աչքը կը տեսնէ ամէն ինչ որ իր սուրբ օրէնքէն մեղադրելի է: Եւ մեր բոլոր սխալանքները մեզի դէմ իբր դատախազ կը մնան մինչեւ որ բոլորը մէկէն Յիսուս Քրիստոսի պատուական արեանը միջոցաւ առատ ներողութեամբ մը սրբուին: Մեր մեղքերը կը նմանին անհամար մարախներու գրոհին՝ որոնք արգաւանդ դաշտի մը վրայ կ'իջնեն եւ ամէն ինչ կը լզեն եւ մարդուն համար սովէն եւ լուսահատութենէն ուրիշ բան չեն թողուր: Բայց ինչպէս որ Եգիպտոսի մէջ էր՝ նոյնպէս է այսօր: Տէրը կը հրամայէ շնորհաց հովին փչել եւ երկրի երեսէն քշել տանիլ ամէն մարախ, եւ մինչ անոնց ամէնը յանկարծ կը հեռանան՝ մեր սրտերը կը հրճուին, կ'ուրախանան: Մեր մեղքերը անհամար են, նման աշնան այս առաւօտներու ցօղի կաթիլներուն, որոնք ամէն տերեւ կը թրջեն: Ու երբ ամէն ծառ մեռնող տարուան վրայ տրտմութեան արցունք կը թափէ, ահա արեւը կը ծագի ու իր տաքութեան մէկ քիչ քանակովը խոնաւութիւնը կը ծծէ, ցօղերը ամբողջ կը ցնդեցնէ եւ կ'ոչնչացնէ, իբր թէ երբեք գոյութիւն ունեցած չլլային: Այսքան անհամար են մեր մեղքերը՝ եւ սակայն այսքան ալ կատարեալ մեր անօրէնութեանց բարձումը, երբ Յիսուսի անհուն սէրը մեր վրայ ծագի, եւ Աստուած Որդիովը մեզ իրեն հետ հաշտեցնէ Անոր քաւիչ արեամբը: Անհաշուելի մեղքեր կը ներուին Աստուածային սիրոյն կենաց մէկ խօսքովը:

Ճ. ՍՓԸՐՃԸՆ



ԻՆՉՊԵՍ ԱՊՐԵԼՈՒ Է ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԱՆՄԵՂԱՆՉԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

(Շար. 2 տարի 1րդ ԹԻԱԷՆ)

Ստանան յաճախ անմեղանջական սրբութիւն կոչուած Յիսուսը կը գործածէ շատ մը անկեղծ հագինս վախճանաւ. համար, որպէսզի անոնք չլլայ Թէ սրբութեան կեցնք մը վարեթելու փորձն անգամ ընեն:

Արդեօք ըմբռնեցի՞ք այն իրողութիւնը Թէ յաղթական կեանքը Աստուծոյ մէկ պարգեւն է: Զայն կրնանք կոչել նաեւ Սուրբ Հոգւոյն լեցունութիւնը: Կամ Յիսուս Քրիստոսի մարդկային սրտին մէջ քնակիւր: Ես մեծապէս կ'օգտուեմ Անոր իմ մէջս քնակելուն իրողութենէն եւ իմ այդ իրականութեան մասին ունեցած գիտակցութենէն: Արդէն Սուրբ Հոգւոյն գլխաւոր գործն է Քրիստոսի ունեցածները առնել եւ զանոնք մեզի ցուցնել:

Ինչ կերպով ալ որ դիտելու ըլլանք խնդիրը, յաղթական կեանքը պարգեւ մըն է: Եթէ դուք որ բար էք, ձեր գաւառներուն աղէկ ընծաներ տալ գիտէք, որքան անկի ձեր Հայրը երկնքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն: Յիսուս օր մը մեղաւոր կնոջ մը ըսաւ. «Եթէ դուն գիտնայիր Աստուծոյ պարգեւը, եւ Թէ ով է Ան որ քեզի կ'ըսէ, ինծի ջուր տուր խմելու, դուն Անկէ պիտի ուզէիր, եւ ինք քեզի կենդանի ջուր պիտի տար»: Գարգեւ մը ապահովելու համար ես ի՞նչ ընելու եմ: Իմ միակ ընկիւքս է զայն առնել: Եթէ պարգեւ մը միայն խնդրելով կարելի է ձեռք ձգել, արդեօք պարգեւաւորն հաճելի պիտի ըլլայ՝ որ երկար շարաքներ, կամ ամբողջ ու տարիներ աղերսելով, աղաչելով եւ տաճարակելով անցնեմ, փոխանակ զայն անմիջապէս առնելու: Հօր մը կամ մօր մը հաճելի պիտի ըլլա՞ր որ իրենց փոքրիկները ամբողջ գիշեր մը արթուն մնային եւ տաճարակելով պաղատէին որպէսզի ստանային այն նուէրները զոր իրենց ծնողքը արդէն իրենց տալու խոստացած էր: Զաւակներուն այսպէս տաճարակելը երբեք նշանակութիւն պիտի չունենար իրենց նուէրները ստանալու համար: Թերեւս հայրենիքին սրտնեղած անոնց ըսէր՝ «Եթէ ձեր աղաչանքներուն վերջ տաք եւ մահի՞ն չերթաք ինծի վստահելով՝ նուէրը երբեք պիտի չընդունիր»: Գոհու:

Յիսուս Քրիստոս ինք է Ծննդեան մեծ նուէրը: Գոհութիւն Աստուծոյ Անոր անպատու պարգեւին համար: (Բ. Կոր. 9. 15): Այդ պարգեւը մերն է. Յիսուսութեամբ ըսուած է Թէ Մեր Տէրոջ փափաքն է որ մեր աշխարհի վրայ տարած ամբողջ կեանքը ըլլայ ծննդեան երկար օր մը, ընդունելով զԱյն իբրեւ մեր յաղթական պարգեւը:

Այո՛, Յիսուս Քրիստոս իր աշակերտներուն ըսաւ. որ երբեւնեք մէջ սպասէին մինչեւ որ վերէն գորութիւն ստանային: Բայց ասիկա Պէնտէկոստէն տուած էր:

Պէնտէկոստէն վերջ եւ ոչ մէկ անգամ աշակերտները Թեւ խորեցին հաւատացեալներուն սպասել Սուրբ Հոգւոյն պարգեւին: Ընդհակառակը Գործք Առաքելոց տառերորդ գլխուն մէջ կը կարդանք Թէ Սուրբ Հոգւոյն պարգեւը իջաւ բոլոր անոնց վրայ որ խօսքը լսեցին, քանի որ Պետրոս առաքեալ տակաւին կը խօսէր Կոռնէլիոսի տանը մէջ եւ ոչ մէկ անհատ դեռ մկրտուած էր: Սուրբ Հոգին առանց յապաղման տրուեցաւ հեռաւ.


Philip

Justice

2 - d 1930 - 1934

8th

10th



նումներուն իբրև արդիւնք պարզամիտ հաւատքի մը առ Յիսուս Քրիստոս: Սպասելու հարկ չկայ երբեք այսօր. եթէ կատարենք պայմանը իրաւունք ունինք ընդունելու պարգեւը: Քրիստոսի բոլոր հետեւողները չգնահատեցին այս պարգեւին արժէքը: Այն պէս կ'երևի թէ մեր Տէրը 500 է առեւ ինքնաշնորհութեամբ, որ սպասեն մինչեւ որ վերէն զօրութիւն տանան, սակայն միայն 120 հոգի հնազանդեցան պատուէրին եւ հետեւարար միայն անմաք ընդունեցին Պէնտէկոստէի օրը այն պարգեւը որ բոլորին ալ խոստացուած էր:

Այսօր շիտակ հասկանաք այս կէտը: Մեր Տէրը խնդով կը փափաքի իր Սուրբ Հոգին լեցնել ամէն մէկ հաւատացեալի սիրտը: Քրիստոս կը բաղձայ լնակել մեր ամբողջ սրտին մէջ: Սակայն մեզի կարելի է Անով լեցուիլ միմիայն այն պայմանաւ որ մեր կամքերը ու մեր մարմինները կատարելագոյն իրեն յանձնենք: Այս իրողութիւնն է որ Պողոս առաքեալ մատնանշել կ'ուզէ երբ անկա կ'ըսէ, «Որ տայ ձեզի իր փառքին Տոկոսեանք չափովը զօրութեամբ հաստատուիլ իր Հոգեւոր ներքին մարդուն մէջ: (Եփես. Գ. 16): Որպէսզի լցուիք Աստուծոյ առէն լրութեամբ (Եփես. Գ. 19) մինչեւ ամէն ալ հասնինք... Քրիստոսի ընդ հասակին չափը ստանալու (Եփես. Գ. 13) Անոր լրութեամբ որ կը լեցնէ ամէնք ամէն բանի մէջ (Եփես. Ա. 23):

Քրիստոսի գալ ուղիւը հիմնադր է, սակայն առեւ հիմնադր է յօտարի որ Անկա մեր ամէն պատասխանատուութիւնը ստանանք. վստելի Անկա ոչ կը սխալի ոչ ալ կը տկարանայ: Անհատաւոր կը թուի որ ռուս քրիստոնէայ այսպիսի պարգեւ մը մերժէ: Կրկին կ'աղաչենք, հաւատքով ընդունեցէք զայն իրեն լեցունութիւնովը: Մի անկալիք ու մի սպասեր յուշումի մը կամ մտքի յափշտակութեամբ մը: Այդ կարգի երեւոյթներ կարելի է ունենալ կամ չունենալ: Քրիստոսի բաժնին համեմատ զԱյն ընդունէ եւ հաւատա՝ թէ Ան մտած է քու սիրտդ քու կեանքդ ըլլալու եւ վստահ եղի՛ր թէ Ան քու բոլոր պէտքերդ պիտի հագայ:

«Ահա ես դուռը կայներ եմ ու կը զգնեմ, եթէ մէկը իմ ձայնս լսէ ու դուռը բանայ, անոր քով պիտի մտնեմ, եւ անոր հետ ընծրիք պիտի ընեմ, ան ալ իմ հետս»: (Յայտ. Գ. 20):

Մի մտնար թէ Քրիստոս արդէն ամէն մէկ հաւատացեալի սրտին մէջ կը գտնուի, խնդիր չէ թէ իրեն հեռուէն հեռու մըն ալ ըլլայ ան: Սակայն ինքը շատերու սիրտը միայն մասնակի գրաւած է եւ միայն մասնակի կը տիրէ անոնց մէջ: Շատ անգամ խցիկներ կը գտնուին մեր սիրտերուն մէջ, որոնց դռները փակ կը պահենք: Անոր առջեւ, եւ ոչ թէ միայն փակ կը պահենք զանոնք, այլ անոնց մէջ բնակիչներ ալ կը պահենք. առաջակներ, որոնք կը սպասեն յարմար պատեհութեամբ մը մ'նացեալ խցիկներուն մէջ ալ մուտ գտնել: Եթէ մէկը... դուռը բանայ:

Քրիստոնէաներու մեծամասնութիւնը այսպէս փակուած դռնակ մը ունի, սակայն ասիկա ոչ թէ միայն ամօթ է, այլ մանաւանդ բացարձակագոյն յիմարութիւն, քանզի մենք գիտենք թէ Անկա կ'ուզէ մեր ամբողջ սրտին մէջ մուտ գտնել որպէսզի մեզի առատ օրհնութիւններ բերէ: Պողոս առաքեալ կ'աղաչէ Հռովմայեացոյ, որպէսզի ինքզինքնին Աստուծոյ ընծայն: Ինք այնպէս ըրաւ եւ լսեց Աստուծոյ ձայնը ոչ թէ փակուած դռն ետեւէն, այլ յայտնի կերպով ու լսեց անապատանքի խօսքեր որ իր սիրտը ուրախութեամբ եւ փառարանութեամբ լեցուցին, այնպէս որ անկա իր սրտին խորերէն կ'աղաչակէ՝ «Դոյնութիւն Աստուծոյ իր անբացարձակ պարգեւին համար»:

Յաճախ կը հարցուի՝ «Կարելի՞ է Յաղթական կեանքը կորսնցնել»: Այո, կարելի է: Փորձութիւնը անպատճառ պիտի գայ եւ կարելի է որ արդիւնքը անկում ըլլայ: Քրիստոնէայ մեծ առաջնորդ մը մի քանի օր առաջ ինծի ըսաւ. «Եւ երբեմն ժամանակաւոր կերպով կը կորսնցնէք իր յաղթութիւնը, սակայն, յարեց ան թէ իր անկումը միշտ արդիւնքն էր հոգ բնակող մեղքին: Անկում անպատճառ տեղի ունենալու չէ: Մեր Փրկիչը կատարեալ է: Առէն անգամ որ մեր Քրիստոսի հետ ունեցած այս աշանչիկ հաղորդակցութեան մէջ խլուած մը տեղի կ'ունենայ, մենք կը ստիպուինք խոստովանիլ թէ մեր այդ անկումը սնկածութեամբ չէր:

Շատ քրիստոնէաներ կան որ յայտնապէս կը յայտարարեն թէ իրենք երբեք չեն մեղանցեր:

«Գիտենք թէ այն ամէնը որ Աստուծմէ ծնած է, մեղք չը գործեր, հապա ան որ Աստուծմէ ծնած է, այսինքն Յիսուս Քրիստոս, զայն կը պահէ, ու չարը անոր չդպրէր»: (Ա. Յովհ. Ե. 18): «Առէն ով որ Աստուծմէ ծնած է, մեղք չգործեր, վստակ սնոր սերմը, այսինքն Յիսուս Քրիստոս, իր մէջ կը մ'նայ, ու չկրնար մեղք գործել, քանզի Աստուծմէ ծնած է»: (Ա. Յովհ. Գ. 9):

Այս խօսքերը անհատական մեղքեր չեն մատնանշիր, այլ մեղանցելու սովորութիւնը: Յանարէնի մէջ մեղք գործել բառին ժամանակը չարապայտելու այն խորհուրդը թէ Աստուծմէ ծնած անհատը որոշ մեղք մը չգործեր, այլ կը նշանակէ թէ Աստուծմէ ծնածը չկրնար շարունակ մեղանշել, ապրանք մեղանցելը իրեն սովորութիւն ընել, կամ յաճախակի մեղքի մէջ գտնուիլ: Յովհաննէս առաքեալ կը խօսի հոս ծանօթ եւ կամաւոր մեղքի բնութեամբ, ոչ թէ տարբարութեան մեղքերու կամ Աստուծոյ փառքէն պակսելու մասին:

(Շար.)

ԼՈՒՍՈՅ ՈՐԴԻՆԵՐ

«Լուսոյ որդիներ էք». (Ա. Թեա. 3. 5)

Մեղաւոր սիրտ մը ամբողջ խառար պատած է, թանձր խառար. բայց այս խառարին մէջ մեր ապաշխարեն ու փրկուիլը կը նմանին կայծակն երևույթի: Մեր խիղճը, հոգին, սիրտը, միտքը կը լուսաւորուին՝ եւ կը տեսնենք Անտեսանելին: Այս տեսիլքը խորոնակ կը տպաւորուի մեր մէջ ու թէեւ անկէ յետոյ յաճախ թանձր խառար կը տիրէ մեր շուրջը՝ բայց մենք կը սպասենք «Լուստեան Աստղին»:

Ինչպէս ժէլածինով ասակին մէկ երկվայրկեան լոյս տեսնելով դիմացի առարկաներուն պատկերը ամբողջութեամբ իր վրայ կ'ընդունի, նոյնպէս ալ իր լուսաւորման պահուն հոգին մէկ երկվայրկեան Քրիստոսի կը նայի, բայց ասիկա կը բաւէ որ Քրիստոսի պատկերը իր վրան տպուի: Յետոյ, ինչպէս ասակին դեղերու մէջ լուսացուելով՝ պատկերը ձերեան կը բերէ, նոյնպէս ալ հոգին զանազան փորձութիւններէ կամ ուսուցումներէ յետոյ երեւան կը բերէ Քրիստոսի պատկերը:

Վ. Ս.

Վ. Ս.

ԱՌ ԲԱՐԵԿԱՄ ԻՄ ՍԻՐԵԼԻ

Պաշտելի ես դուն ինձի ո՛վ բարեկամ, զի կեանք, լոյս եւ շնորհք կուտաս անոր որ քեզ կ'ընդունի:

Դուն բարեկամ ես ամենուն, տկարին, զօրաւորին, տգէտին, գիտունին, աղքատին, հարուստին, ամէն լեզունէ կը խօսիս, բոլոր աղգեր քեզի կը կարօտին:

Վեհաշուք ես, թաղաւորներու պալատներուն մէջ կը հիւրասիրուիս. միեւնոյն ատեն հեզ եւ խոնարհ ես, աղքատին խրճիթին մէջ ալ կը բնակիս:

Քաջ եւ անվեհեր ես, անհաւատարիմ հաբ իշխանները անաչառութեամբ կը յանդիմանես, միանգամայն քաղցր եւ խրախուսիչ ես բոլոր անոնց որ ճշմարտութիւնը կը սիրեն եւ կ'ը վնասեն, ու պարտաճանաչ, ուղղամիտ եւ հեզ են:

Դուն կենսատու ճշմարտութեանց շտեմարանն ես անձայրածիր, քու մէջդ են բանալիները յաւիտեանական կեանքի եւ փրկութեան: Դուն հիմն ու կեդրոնն ես միութեան, խաղաղութեան, անկեղծ սիրոյ եւ համերաշխութեան, որոնք զիւրաւ կ'իրականանան քեզի հպատակողներու ի յաւիտեան:

Քու մէջդ է որ սգաւորը եւ նեղիւիլը լաւագոյն մխիթարութիւն կը գտնէ, զի դուն զօրավիգ ես տկարներու, անոնց խաչը եւ տառապանքը թեթեւցնելու եւ զիւրատար կ'ընես: Նաեւ դուն ես վստահելի առաջնորդ անփորձ երիտասարդին եւ խեղճ մտորածին, գաւազան՝ ծերերդուն եւ ուղեցոյց ամենուն:

Ինքզինքդ կ'արտայայտես միշտ 66 խորիմաստ եւ անսոյշ երգերով ընդամէնը 4489 տուներէ բաղկացած, որոնք «օգտակար են սորվեցնելու, յանդիմանելու, շտկելու եւ արդարութեան խրատելու համար, որպէսզի Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ ամէն բարի գործերու պատրաստուած»:

Քեզ չեն ընդունիր միայն անոնք որ չար են, կամ ըմբոստ, կամ իմաստակ (կէս գիտուն) կամ ամբարտաւան, քանզի անոնք չեն ուզեր հրաժարիլ մեղքէն որ կ'առաջնորդէ զիրենք դէպի անդունդը մահուան:

Չարերը քեզ հալածած են միշտ դարերու ընթացքին, արդար եւ անաչառ վճիռէդ ազատ զգալու համար եւ փորձած են անունդ ջնջել իսպառ, նոյնպէս կը հալածեն քեզ այսօր, բայց փա՛ռք Աստուծոյ, զէթ ընարեւմտներու սիրոյն համար պիտի մնաս մինչեւ աշխարհի վերջը անսասան, անփոփոխ, յաղթելի եւ զօրաւոր:

Հոգիիս թշնամին է ան որ կը ձգտի զիս հեռացնել քեզմէ, լուսեղէն հրեշտակի կերպարանքով ալ ըլլայ ան: Չեմ վարանիր սակայն ըսելու անոր «Եսիս զնա ո՛վ սատան»:

Եթէ զիս լքէ աշխարհս համայն, ու բարեկամք եւ սիրելիք ըլլան խիտ, դաժան, առանձին չեմ զգար բնաւ, երբոր ըլլաս ինձմէ անբաժան:

Յօժար եմ զոհելու աշխարհային հաճոյքներս եւ

ամէն բան իմին, սիրոյն համար պահպանութեան բարեկամութեանդ թանկագին:

Ո՛վ բարեկամ իմ պաշտելի:

Հ. Գ. Ո. Պ.

Գահիրէ

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Բրտֆ. «Յ. ՊԵՏԷՐՍ»

Ս. ԳՐՔԻ ԱՌԱՋԻՆ ԷՋԸ

Բ. ԳԼՈՒԽ

Ե Ր Կ Ի Ր Ը

«Երկիրը անձեւ ու պարտալ էր եւ փոքունդին վրայ խաւար կոր, եւ Աստուծոյ Հոգին ջուրերուն վրայ կը շարժէր»:

Աստուծաշունչի այս խօսքերուն հետ կը համաձայնի նաեւ բնաշնութեան արգիւնքը: Առաջնակարգ աստեղագէտներ ու բնախոյզներ կ'ընդունեն թէ երկիրը՝ նախ իբր հրաշէկ եւ ապա կամաց կամաց պողպղ ու մթաշնոյզ գունդ մը՝ տեղերէ մէջ կը թաւալէր եւ իրի շոգիով շրջապատուած էր: Թէեւ ժամանակի ընթացքին շագին պողպղով մեծ մասով ջուրի վերածուեցաւ, բայց անկէ կարելոր մաս մը դեռ մնաց եւ անթափանց խաւարի մը նման ծածկեց երկիրը: Ա՛յո՛ւ ճիշդ այս է որ մեզի կ'ըսուի Աստուծաշունչի երկրորդ համարին մէջ: Բնախոյզներ գիտականները չեն պատմեր նաեւ թէ «Աստուծոյ Հոգին ջուրերուն վրայ կը շարժէր», քանզի անոնք Անոր չեն կրնար հասնիլ իրենց խաղաղութիւններով ու հաշիւներով: Բայց ի՞նչ կ'ընէր այդ ստեղծագործ Աստուծոյ Հոգին... Ան ջուրերուն վրայ կը շրջէր եւ կ'օժաէր նիւթը հագարաւոր ուժերով ու օրէնքներով, որոնցմով այժմ կը կառավարուի երկիրը եւ որոնցմէ յառաջ կուգան բնական բոլոր երեւոյթները. նոյնիսկ մարդուն մարմինը այս օրէնքներուն եւ ուժերուն համաձայն ուղիատող հրաշալի գործիք մըն է: Քանզի ինչպէս որ արեւատագէտ մը, օրինակի համար ճարտարապետ մը, հոս ու հոն շրջելով նախ իր գանկին մէջ կը ճշգէ թէ ի՞նչ մեծութիւն, ձեւ ու համեմատութիւն տալու է իր հրաշակներին ամէն մէկ մասին եւ զայն իր ամբողջութեամբ կը ձեռնարկէ, այդպէս ալ աստուծոյն Հոգին ջուրերուն վրայ կը շարժէր եւ նիւթին մէջ չափ ու կշիռ, թուական համեմատութիւն ու օրէնք կը հաստատէր:

Սովայն զարմանալի է որ ինչպէ մարդը ոչ թէ միայն աստուծոյն, հազա նաեւ իր մօտը կիցած բնական բաներու համար կոյր է: Քանի՛ քանի՛ միլիոնաւոր մարդիկ կը պատին երկրի վրայ. ան իրենց բնակավայրն է, որմէ կը ստանան անոնք իրենց անունը, անոնց մարմինը սփռէ յառաջ եկած է եւ անոր պիտի վերադառնայ: Այսուհետեւ որչափ քիչ ուշադրութիւն կը դարձնեն անոնք Աստուծոյ այս մեծ ստեղծագործութեան: Անոնք իրենց զբաղումներուն ու հաճոյքներուն հետեւն կը վազեն, եւ իրենց համար աւելի հաճելի ու կարելոր կը թուին պարտալ ժամովաճառութիւնը, անհամ շաղակրատութիւնը ու ֆրատար թվաթափաղը, քան զնախնութիւնը Աստուծոյ մ'ո՞ր գործերուն ու խորհուրդներուն: Իրաւ է որ անոնք դպրո-

ցին մէջ կը սորվին թէ երկիրը գունդ մըն է, որ տարին մէկ անգամ արեւին շուրջը կը դառնայ, բայց ո՛րքան քիչ են այնպիսիները, որոնք իրենց այդ ծանօթութեան աւելի բարձր խորհուրդներ կ'ընկերացնեն: Քրիստոնեայ մը այս մտաւն ալ աւելի կատարեալ մարդ ըլլալու է. ան պէտք է ուրախութիւն զգայ խորհելու նաեւ արտաքին աշխարհի վրայ, որու մէջ Աստուած գինքը դրած է: «Որովհետեւ Աստուած անոնց յայտնեց. քանզի աներեւոյթ բաները աշխարհի սկիզբէն ստեղծուածներովը կ'իմացունին, կը տեսնուին, այսինքն է իր մշտնջենաւոր դօրութիւնն ու աստուածութիւնը» (Հռովմ. Ա. 19. 20):

Ահարկու մեծութիւն մ'ունի մարդուն այս բնակավայրը: Մեզի համար անկարելի է յատկօրէն ըմբռնել գունդ մը, որու շրջագիծը 9000 ժամուան ճամբու երկարութիւն ունի: Բայց անգամ մը մտածենք գոնէ թէ աւելի մոկերեսին վրայ կան այնպիսի մեծածառաւ ուղիւնոսներ, որոնց վրայ պարզեթաց նաւերը ամիսներով գիշեր ցորեկ կը նաւարկեն՝ յաճախ չտեսնելով ոչ մի ուրիշ բան, եթէ ո'չ երկինքը իրենց գլխուն վրայ եւ ջուրը իրենց ստեղծուած առաջ: Կան արեւակէզ աւազներով ծածկուած անապատները, ուր ուղտը, անապատի այդ նաւը, շարժանքով կը քալէ առանց անոնց ծայրը հասնելու: Կան ընդարձակ տափաստաններ, ուր միլիոնաւոր կենդանիներ աղատօրէն կը թափուին. կան հիւսիսային ու հարաւային բեւեռներու սառնային տարածութիւնները, որոնք ամբողջ Եւրոպայի չափ մեծութիւն ունին: Ասոնցմէ գտա յիշենք նաեւ մարդաբնակ ընդարձակ երկիրները, լեռնաշղթաները, սառնագետերը, հովիտները, որոնք հոս ու հոն կը հոսին: Մեր ուշադրութեան առնենք մանաւանդ սա պարագան թէ այս վիթխարի երկիրը առանց տեղ մը հաստատուած ըլլալու աղատօրէն կը թաւալի անհուն անջրպետին մէջ եւ բնաւ դուրս չեւեր իրեն համար գծուած շաւիղէն: Երբ այս ամէնը անցնենք մեր մտքին առջեւէն, պիտի չկրնանք զոպել մեր հիացումը եւ պիտի գոչենք: «Երկիրը իմաստուն ճարտարագետի մը միջոցաւ ղեկավարուող հրաշակերտ մըն է:

Բայց այս երկիրը, — որու վրայ աւելի քան մէկուկէս միլիաւ մարդիկ կ'ապրին եւ որու պաղած բարակ կեղեւին սակը հրային ուղիւնոս մը կը թաւալի, — իբրեւոք ու անապատներովը, դաշտերով ու լեռներովը միասին ո'չ թէ միայն կը շարժի, հազար գիշեր ու ցորեկ կը թռչի 50 անգամ աւելի արագ քան թէ թնդանօթէն արձակուած գնդակը: Եթէ կարենայինք իրմէ դուրս ուրիշ տեղի մը վրայ կայնիլ ու անկէ դիտել այս թռչող երկրագունդը, ինչպիսի՜ հիասուլի տեսարան մը պիտի պարզուէր մեր աչքին: — Երկիրը պիտի երեւնար մեզի՝ նախ փոքր սասուլի մը նման, սակայն որքան մօտեւոր մեզի այնքան աւելի պիտի մեծնար, նախ լուսնին չափ. միայն, բայց քիչ յետոյ այնքան մեծ՝ որ երկինքի կէս մասը պիտի գոցէր մեր տեսութենէն, եւ այդ պարագային մի քանի վայրկեանէն փոթորիկի արագութեամբ մեր առջեւէն պիտի անցնէին ձիւնապակ լեռ, կանանչ անտառ, մրրկայայտ ուղիւնոս, մեծ քաղաք եւայլն եւայլն: Բայց քիչ ետքը ասոնք բոլորն ալ դարձեալ պիտի անհետանային եւ մենք երկիրը պիտի տեսնէինք իբր արձաթեայ հսկայ գունդ մը երկինքի վրայ փայլող, որ հետզհետէ մեղմէ հեռանալով նորէն միայն փոքր սասուլի մը պէս պիտի երեւնար: Ասով մենք տեսած պիտի ըլլայինք Ստեղծիչին փառքին փոքր մաս մը միայն, երկիրը, զոր Աստուած սկիզբէն ստեղծեց: Բայց անկէ զտա արեւին շուրջը կը դառնան գեռ բազմաթիւ մոլորակներ՝ շատեր աւելի մեծ քան մեր երկիրը եւ ոմանք շրջապատուած լուսնիներով ու

մանեակներով: Մարդուս համար լաւ չէ՞ այսպէս հոգիով Աստուծոյ փառաւոր գործերուն վրայ ուրախանալ եւ երկրպարու հիացումով գոչել: «Մարդս ինչ է որ վանկա կը յիշեն»: Փոքրահի մարդուն վրայ խորհելը մեզի յաճախ խաղաղութիւն եւ պարտութիւն կը պատճառէ, յիշեցեալ Աստուծոյ գործերը դիտելը մեր հոգին կը հանգարտեցնէ ու կը բարձրացնէ:

Այսպէս շատ շատ տարիներ պառլ երկիրը կը թռչէր միջոցին մէջ: Ան դեռ անձեւ ու պարտալ էր, իսկարի խանձարուովը պատուած. այսուհանդերձ մեծափառ տեսարան մը կը պարզէր Աստուծոյ որդիներուն, որոնց նկատմամբ գրուած է. — «Ո՛ր էիք դուն, երբ ես երկրի հիմքը կը դնէի... երբ առաւօտեան աստղերը մէկտեղ փառաբանութիւն կ'ընէին եւ Աստուծոյ բոլոր որդիները ցնծութեամբ կ'աղաղակէին. «Երբ ամպը անոր հանդերձ դրի ու մէքը խանձարուը» (Յոր. 14. 4, 7, 9): Եւ հիմա ալ ածապարանքով իր ճամբէն կ'ընթանայ երկիրը՝ իր վրայ բնակող մէկուկէս միլիաւ մարդոցով, անհամար կենդանիներու ու թռչուններու եւ բազմամիլիոն ձուկերու հետ միասին: Աստուած կը դիտէ այս բոլոր էակներն ալ: Այս վայրկեանին, երբ դուն այս տողերը կը կարդաս, Ան քու սրտիդ կը նայի եւ կը կարգայ քու բոլոր խորհուրդներդ: Կը կարգայ նաեւ խորհուրդները միլիոնաւորներու, որոնք երկրի մեւ երեսին վրայ կը քննան ու կ'երազեն: Իր աչքէն ծածկուած չեն ո'չ մտածումները վայրի Պուշմէնի, որ հիմա հարաւային Ափրիկէի մէջ իր թռչաւոր նետն ի ձեռնին բարձր խոտերուն մէջ Վիթին տեսէն կը սողոսկի, եւ ոչ ալ Եսփի մացիինը, որ իր մակոյկին մէջ նստած փոթորկայայտ ծովուն վրայ ծովածի կ'որսայ: Այս երկվայրկեանին, երբ Ան քու սիրտդ ու երկիւմունքներդ կը քննէ, գիտէ նաեւ թէ ինչ կը խորհի 400 միլիոն չինացիներէն իւրաքանչիւր անձը, անոնց կեանքի պարագաները իրենցմէ աւելի լաւ գիտէ: Անգարար Իր ուշադրութեան առարկայ կ'ընէ Ան ընդարձակածառաւ երկրի վրայի բոլոր հիւանդները, աղքատները ու մոլորակները իրենց թշուառութեան մէջ, վեհապետները իրենց մեծափառութեան եւ ուժին մէջ, հաղարարները, որոնք պատերազմի մէջ զիւրար կը խողխողեն եւ սծրագործները, որոնք գիշերուան մէջ դարանակալ կ'ըլլան: Ան կը լսէ բոլոր խօսքերը, երգերը, աղօթքները, անէծքները, խնդալները, լացերը, իւրաքանչիւր ասն ողբն ու հառաչանքը, որոնք իրեն կ'ուղղուին: Դեռ աւելին կայ. — Ան կը տեսնէ անապատին աւիւծը, օդին մէջ թռչող ագռուը, ամէն մէկ թռչունը իր բռնին մէջ եւ իւրաքանչիւր բզեզը իր խոտին վրայ: Ամենախոր ծովուն մէջն իսկ չկայ ձուկ մը, որուն ճամբան Անկէ ծածկուած է, եւ ո'չ ալ տերեւ մը ոտէ ծառի մը վրայ, որուն ձեւն ու մեծութիւնը Անոր անծանօթ են: Եւ մինչ Ան մեր ահագին աշխարհը կը կառավարէ, կը խնամէ ու կը սնուցանէ, կը նայի նաեւ ջրերի իւրաքանչիւր կոթիլին մէջ ապրող հաղարար անտեսանելի կենսաւորներուն եւ կոտայ անոնց ամէն մէկին իրենց սնունդը, քանդի Անով կապրին, կը շարժին ու կան (Գործ. Ժէ. 28): Եւ ինչ փոքր է այս ամէնը բազմաթիւ այն խորթափառ տեսութեան, որու առջեւ չկրնար ծածկուիլ եւ ո'չ մի բան, որ գոյութիւն ունի տիեզերաց միլիոնաւոր արեգակներէն միոյն, երկնից երկինքին ու գոգիքին մէջ:

Այո՛, մեծ ու հզօր է Տէրը: Ուեւ բան չկայ ծածկուած Իր աչքերէն եւ անըմբռնելի իմաստ մը ծածկուած է սա խօսքին մէջ. — «Աստուծոյ Հոգին կը շարժէր անգունդին վրայ»:

(Շար.)

ԶԱՆՈՒՄ ԼՈՒՐԵՐ

ՎԵՐ. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Յաւուար 26ը, Կիրակի, Մարտէյլի հայ ուսանողական եկեղեցւոյն համար հանգիստուոր, մեծ ուրախութեան օր մըն էր: Վերջապէս եկած էր ժամանակը, երբ իր սիրելի, գործունէ- հայ եւ իր պաշտօնին աստօնաքննուող, օրհնութիւններու եւ նուի- բակահնութեանը գիտակից հովիւը Պատ. Յովհաննէս Ղազարոս- եան պիտի ձեռնադրուէր: Իրիկուան ժամը ութ ժամն էր, Բիւ Կրիստոսի ֆրանս. ուսեա. եկեղեցւոյն հոյակապ շէնքը գրեթէ ամբողջութեամբ լեցուած էր թրանսալի եւ հայ խումբն բազմութեամբ մը: Բեմին առջեւ տեղ գրաւած էին «Աքսիոն» Բրէթիէնի տնօրէնը՝ Տր. Պէրրոն, եօթը թրանսալի ու մէկ հայ եկեղեցիներու ներկայացուցիչներ, Գեր. Գրիգորիս Եպիս. Պալաքեան եւ Տ. Մեսրոպ քահանայ: Եւ ոչ ոք՝ պաշտամունքը սկսաւ «Քիզի կարօտ եմ Տէր» երգով: Ապա աղօթեց Վեր. Թրէսիէն եւ Սուրբ գիրքէն ֆրանսերէն ու հայերէն լեզուով փոխիփոխ՝ հատուածներ կարդացին Վեր. Փառաստն ու Մ. Կ. Փափազեան Թրէզնոյէն: Աւազին ուղերձն ըրաւ Վեր. Մարթէն-Յէլէնը, ֆրանսական եկեղեցիներու ներկա- յացուցիչը, որու գլխավոր խորհուրդները հետեւեալներն էին. —

Այսօր հայ հովիւ մը թրանսալի մէկ եկեղեցւոյն մէջ կը ձեռնադրուի, պատճառը մեր հայ եղբայրներուն անհայտնութեանն է. անոնք ցրուած են ամբողջ աշխարհի մէջ. ամէն տեղ օտարականներ, պանդուխտներ են: Ինչպէս մասնաւոր հա- մակրանք մը չլուարձ հանդէպ մեր հայ եղբայրներուն, քանի որ մենք ալ սերունդն ենք Հիւսիսներու, (թրանսալի առաջին ուսանողականներու), որոնք հայերու նման կողոպտուեցան, տանջանքներով ջարդուեցան ու աքսորուեցան: Ուստի վատահ կոչէք, դուք հայ եղբայրներ, թէ մեր սրտերը ձերիներուն հետ միասին կը տրոփեն եւ մենք ուրախութիւնով է որ այսօր մեր սառնարը ձեզի կը տրամադրենք եւ մեր քրիստոնէական սիրոյ պատգամը կ'օգտուենք աշխարհի ամէն կողմը ցրուած բո- լոր դժբաղդ հայերուն: Դաւով Ձեզի, սիրելի պաշտօնակից, մենք գիտենք թէ Դուք ինչ անձնութիւններ եւ նուիրուած էք Ձեր գործին եւ ինչ փառապանծ տեսիլներ ունիք Ձեր աղ- գին նկատմամբ: Դիտենք որ Դուք կ'ուղէք Ձեզի յանձնուած հօտին անդամները Փրէզիս աւաքներէլ եւ զանոնք Աստուծոյ գործին համար ներգործող ուժեր դարձնել: Այս նպատակին համար Դուք անոնց կը քարոզէք Յիսուս Բրիստոս խաչեալը: Սիրելի պաշտօնակից, Ձեր թրանսալի եղբայրները Ձեզի իրենց ձեռքերը կ'երկնեն՝ ի նշան քրիստոնէական սիրոյ ու վստա- հութեան:

Ապա հայ ուսանողական եկեղեցիներու ներկայացուցիչը Վեր. Մանասէ Կ. Փափազեան նոր ընծան հայ Աւետ. Միու- թեան կողմէն իւր եղբայր ողջունելէ ետքը՝ թեւադրեց անոր իր ամենամոլորական պարտականութիւնը նկատել խօսքին, մաս- նաւորապէս Աստուծոյ քանին (Բրիստոսի) քարոզութիւնը: Ան իւր ձորոտաւուն բեմախօս մը վեր հանեց խօսելու արուեստին կարեւորութիւնը եւ յորդորեց բեմ ելլելէ առաջ պարտաւորել թէ՛ խօսքերը եւ թէ՛ հոգին: «Վերջինս կրնայ ձեռք ձգուիլ միայն Յիսուսէն՝ աղօթքի միջոցաւ՝ ըստ ան:»

Յետոյ խօսեցաւ Աքսիոն Բրէթիէնի ներկայացուցիչը՝ Տր. Պէրրոն: Ան ողջունեց նախ Վեր. Ղազարոսեանը իւր Միսի- նարութեան վաղմիկ քարեկաններէն մին եւ ապա յորդորեց ներկաները այս հանգիստուորութեան առթիւ մասնաւորապէս Վատ-

ուած փառաբանել, քանզի «Ան պաշտպանած է եղբայր Ղա- զարոսեանը հաւաքանքներէ, Ան կոչած է զայն ծառայելու Իր փառքին համար, օրհնած է անոր ծառայութիւնը եւ զայն կը դարձած է թէ «Աքսիոն Բրէթիէնի» եւ թէ հայ ուսեա. եկե- ղեցւոյն մէջ: Ետքը սիրելի հայրանքը հակիրճ կերպով ցուցուց թէ «Աքսիոն Բրէթիէնի» թէ եւ գլխավորապէս Սուրբոյ Հայ գաղթականներու կը ծառայէ, բայց հայերու թրանսալի գաղթն ետքը ստանձնեց նաեւ հայ հայ ուսեա. արուսական եկեղեցւոյն կողմակերպութիւնը: Այժմ՝ այս Միսիսնարութիւնը հայ եւ թրանսալի քրիստոնէաները միացնող կապ մըն է, ան թրանսա- յիներուն հայերու տառապանքին վրայով կը խօսի, իսկ հայե- րուն կը բերէ թրանսալի քրիստոնէաներու սիրոյ ապացոյցները: Ան հայերու անունով շնորհակալութիւն կը յայտնէ թրանսալի բողոքականներուն՝ իրենց սիրոյն համար եւ հայերն ալ կ'ապա- հովցնէ թէ իրենց թրանսալի եղբայրները սակէ ետքն ալ մի- եւնոյն սէրը պիտի տածեն իրենց հանդէպ: Ան այս ամէնը կ'ընէ Աստուծոյ փառքին եւ թաղաւորութեանը ծառայելու համար:

Այս խօսքերէն ետքը վերջապէս կարգը եկած էր ձեռնա- գրութեան. նախ Պատ. Ղազարոսեանի հովուական գաւառանքն եւ ուրիշ առնուեցաւ Վեր. Մ. Փափազեանի եւ Բալթընպաքի կողմէն եւ ապա ձեռնադրուեցաւ ինը երէցներու միջոցաւ: Շատ յուզիչ պարագայ մըն էր, երբ ձեռնադրութիւնէն ետքը բոլոր պատուէրները եկան ու կարգաւ նորոնձային հետ համ- բուրուեցան:

Վերջին ուղերձն ըրաւ Վերապատուելի Ղազարոսեան, որ զգաճուած խօսքերով շնչաւց իր սկարուծիւնը եւ հովուական պաշտօնին ծանրութիւնը: Յիշեց Թէ հովուին պարտականու- թիւնն է Մովսէսի նման Աստուծոյ և ժողովուրդին մէջտեղը կանխել, վերջնապէս համար աղօթել եւ զան իր Աստուծոյն հետ հաշտեցնելու համար պարտաւոր ըլլալ ինքզինքն իսկ զոհելու: Ան Պօղոսի նման ըսել կարենալու է. «Կը ինդրէի նովուած ըլ- լալ Բրիստոսէ իմ մարմնոյ կողմանէ եղբայրներուս ու ազգական- ներուս համար: «Եւ՝ իրր հայր ու ծառայ կենալու է իր եկեղեցի- ներու» (Բ. Կորն. Գ. 5) մէկ քանիները ապրեցնելու համար:

«Երբ քարոզիչը այս ամենուն վրայ կը խորհի, ստիպուած է դողդղալ ու հարցնել — Ո՞վ բաւական է այս ամենուն. բայց զինքը կը քաջալերէ ձեռքը խօսքը, «իմ զօրութիւնս սկարու- թեան մէջ կը կատարուի»:

Այս նուիրական արարողութիւնը վերջացաւ Պալաքեան Սրբա- զանի պահպանիչով եւ Վեր. Ղազարոսեանի օրհնութիւնովը: Արարողութիւնը կ'ընդմիջուէր երգախմբով եւ ներկանե- րու երգերովը, որ հասնելի փոփոխութիւն մը կը բերէին:

Ձեռնադրութեան հանդէսը Մարտէյլ քաղաքի Հայ աւետարա- նականներու սրահը բերկրութեամբ լեցուց: Անոնք շատ ուրախ են որ այժմ իրականութիւն եղած է այն փափաքը, զոր անոնք քանի մը տարիներէ իվեր իրենց սրտերուն մէջ կը սնուցանէին: Մենք ալ խնդակից ենք իրենց եւ կ'աղօթենք որ Տէրը իր զօրու- թեամբ, իմաստութեամբն ու սիրով զօրավիգ հանգիստնայ ձեռնադրուելին:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ՀԱՍՏՅԷ՛Ր ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ. — «Բանբեր»-ի նոր հա- սցէն է 7, Rue Papère, ուր զրկուելու են յիստ ախտա- լուր թղթակցութիւնները:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Տպար. «ԲԱՆԵՐ»-ի, 7, Բիւ Բաքը